

ԹԻՎ 8 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«19» սեպտեմբերի 2023թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 6-Ա

ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԹԻՎ 8/1, 8/4, 8/9, 8/10, 8/14, 8/16, 8/17, 8/19, 8/24, 8/26, 8/32, 8/38, 8/46, 8/47 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցմացման նպատակով կազմավորված թիվ 8/1, 8/4, 8/9, 8/10, 8/14, 8/16, 8/17, 8/19, 8/24, 8/26, 8/32, 8/38, 8/46, 8/47 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունները՝ թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Ձ Ե Ց

Ուսումնասիրելով ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված՝ Երևանի ավագանու 2023 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 8/1, 8/4, 8/9, 8/10, 8/14, 8/16, 8/17, 8/19, 8/24, 8/26, 8/32, 8/38, 8/46, 8/47 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունը, թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ծագել են արդյունքների սխալ ամփոփման վերաբերյալ կասկածներ:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն առաջին հերթին վերահաշվարկում է վիճակահանությամբ ընտրված ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները: Երկրորդ հերթին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկում է բոլոր այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարծիքով ներկայացված են քվեարկության արդյունքների սխալ ամփոփման հիմնավոր ապացույցներ, ինչպես նաև վերահաշվարկում են բոլոր այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց արձանագրությունների ուսումնասիրմամբ (այդ թվում՝ անճշտությունների ուսումնասիրմամբ) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ծագել են արդյունքների սխալ ամփոփման վերաբերյալ կասկածներ, կամ այդ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է գրառում սույն օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված տեղեկանքը տպելու անհնարինության մասին (...):»:

Վերոգրյալի հաշվառմամբ թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է վերահաշվարկել թիվ 8/1, 8/4, 8/9, 8/10, 8/14, 8/16, 8/17, 8/19, 8/24, 8/26, 8/32, 8/38, 8/46, 8/47 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սեփական նախաձեռնությամբ իրականացնել թիվ 8/1, 8/4, 8/9, 8/10, 8/14, 8/16, 8/17, 8/19, 8/24, 8/26, 8/32, 8/38, 8/46, 8/47 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների վերահաշվարկ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**Թիվ 8 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ՝**

Տ. Ավագյան